
**ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
ՌԱԶՄԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ Մ. Ս.

«Սառը պատերազմի» ավարտից հետո՝ 1990-ական թթ. սկզբին, փլուզվեց երկբևեռ աշխարհակարգը, ինչը էական ազդեցություն ունեցավ միջազգային հարաբերությունների վրա: Սկիզբ առած գլոբալացման գործընթացներն իրենց հերթին փոխեցին միջազգային հանրության առջև ծառացած խնդիրներն ու մարտահրավերները՝ ազդելով նաև գլոբալ անվտանգության համակարգերի ճարտարապետության վրա: Պետությունների համար «անվտանգություն» հասկացությունն ավելի ընդլայնվեց՝ ներառելով ոչ միայն ռազմական մարտահրավերներին դիմակայելու պարտավորությունները, այլև հասարակության և մարդու անվտանգության պահպանման խնդիրները:

Չեզոքության քաղաքականությունը, որը հավասարակշռող գործոնի նշանակություն էր ունեցել «սառը պատերազմի» ողջ ընթացքում, կարծես սկսեց համարվել ոչ նպատակահարմար ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում: Արև-մրտյան տեսաբան Մ. Կուքսի կարծիքով, «բազմաբևեռ եվրոպական կարգերին անցնելուն և համաեվրոպական կառույցների ձևավորմանը զուգընթաց՝ չեզոքությունը կորցնում է իր բուն իմաստը: Դա՝ շինքների, ինտեգրման և համագործակցության գաղափարների վերափոխումը ավելի գրավիչ է դարձնում պետությունների ինքնիշխանությունը և անկախությունը երաշխավորող այլ մոդելներ, քան դասական չեզոքությունն է»¹:

Նման կարծիք են հայտնում նաև քաղաքագետներ Ա. Պելինկան և Ռ. Վոդակը՝ մասնավորապես նշելով, որ «երբ երկու բլոկների միջև հակամարտությունը գերիշխող էր միջազգային քաղաքականության մեջ, չեզոքությունը ձեռնառու լուծում էր հատուկ աշխարհաքաղաքական դիրք զբաղեցնող փոքր պետությունների համար: Արևելք-Արևմուտք հակամարտությունն այլևս պատմություն է, և չեզոքությունը կորցրել է իր գրավչության մեծ մասը, առնվազն Եվրոպայում»²:

Այս եզրահանգումը կարելի է արդարացի համարել, քանի որ Եվրոպայում, հիրավի, ձևավորվեց ազատական գաղափարների, ժողովրդավարական կառավարման, հանդուրժողականության, մշակութային բազմազանության վրա հիմնված խաղաղության և կայունության գոտի, որն էլ ավելի էր ամրապնդվում Եվրոպական միության (ԵՄ) և Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ընդլայնմանը զուգընթաց: Բնական է, որ ձևավորվող միասնական անվտանգության գոտում

¹ Kux S. Neutrality and new thinking, in Soviet Foreign Policy in Transition International Council for Central and East European Studies ed. Kanet R. E., Miner D. N., Resler T. J., Cambridge, 1992, p. 114, 115.

² Pelinka A., Wodak R. Austrian Neutrality, in Neutrality in Austria, Vol. 9 of Contemporary Austrian studies, Bischof G., Pelinka A., Wodak R. Transaction Publishers, New Jersey, 2001, p. 3.

«Հեղոթությունը» պետք է ընկալվեր որպես Եվրոպայի ռազմական ինտեգրմանը խոչընդոտող հանգամանք:

Բացի այդ, ժամանակակից միջազգային իրադրության պայմաններում, երբ համաշխարհային քաղաքականության մեջ գործուն դերակատարություն ունեն ոչ միայն պետությունները, այլև տարաբնույթ վերազգային կառույցներ և ոչ պետական կազմակերպություններ, կրկին հարց է ծագում Հեղոթության քաղաքականության պատեհության վերաբերյալ, քանզի պարզ է, որ լինելով միջազգային իրավունքի տարրերից մեկը՝ Հեղոթ կարգավիճակը կարգավորում է հարաբերությունները պետությունների միջև, և Հեղոթ պետության անվտանգությունն էլ երաշխավորվում է հենց պետությունների կողմից: Հետևաբար, անորոշ է թվում, թե Հեղոթ երկիրն ինչպես կարող է պայքարել այնպիսի սպառնալիքի դեմ, ինչպիսին, օրինակ, միջազգային ահաբեկչությունն է, քանզի հակաահաբեկչական համագործակցությունը պահանջում է սերտ կապերի հաստատում ոչ միայն իրավական, քաղաքական, այլև ռազմական ոլորտում:

Արդ, փորձենք ներկայացնել, թե ինչ փոփոխությունների է ենթարկվել եվրոպական անվտանգության համակարգը «սառը պատերազմից» հետո, և այդ փոփոխությունները ինչ ազդեցություն են ունեցել Հեղոթության քաղաքականության վրա: Ուսումնասիրե՛լով Եվրոպական միության անդամ Հեղոթ պետությունների փորձը՝ կտեսնենք, թե որոնք են այն հիմնական «վերապահումները», որոնց պատրաստ են այս երկրները Հեղոթությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների պահանջներին համապատասխանեցնելու համար:

Հարկ է նշել, որ «Հեղոթություն» հասկացությունն իր պատմական զարգացման ընթացքում մի քանի փուլ է անցել: Ծագումից մինչև միջնադարն ընկած ժամանակաշրջանում այն նշանակում էր պատերազմին անմիջականորեն չմասնակցող որևէ պետության կողմից պատերազմողներին հավասար հնարավորությունների ընձեռում: Այնուհետև այն ստանում է Հեղոթ պետության կողմից պատերազմ վարողներին որևէ օժանդակություն չցուցաբերելու իմաստը, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո մի շարք երկրների համար Հեղոթությունը դառնում է ռազմական դաշինքներին չմիանալու ձգտման արտահայտություն³:

Ուստի «Հեղոթություն» հասկացությունն իր իրավաբանական (այսինքն՝ պատերազմի ժամանակ կողմերից ոչ մեկին չհարելու պետության իրավական կարգավիճակի) իմաստով պետք է տարբերել Հեղոթության քաղաքականությունից, որն իրականացվում է ոչ միայն պատերազմի ընթացքում, այլև խաղաղ ժամանակ՝ նպատակ ունենալով երկիրը գերծ պահել ռազմական միությունների և դաշինքների մեջ ներքաշվելուց:

³ Մանրամասն տե՛ս Պ. Կուչնով. Нейтралитет в международном праве, Пермь, 1968, с. 3-8.

ԵՄ-ի անդամ հինգ չեզոք պետություններն էլ իրավաբանորեն ամրագրել են ռազմական դաշինքներին չմիանալու իրենց քաղաքական որոշումը: Այդ իսկ պատճառով Ավստրիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Իռլանդիան և Մալթան այսօր ստիպված են ձկունություն ցուցաբերել իրենց արտաքին քաղաքականությունում, քանի որ միայն ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունները հավասարակշռելով՝ հնարավոր կլինի բավարարել անվտանգության պահանջները համաեվրոպական համակարգի շրջանակում՝ միննույն ժամանակ վնաս չհասցնելով արդեն ավանդույթ դարձած չեզոքության քաղաքականությանը⁴:

⁴ Կորցնելով սեփական տարածքի ավելի քան մեկ երրորդը և բախվելով Եվրոպայում արագ փոփոխվող աշխարհաքաղաքական իրադրությանը նապոլեոնյան պատերազմներից հետո՝ 1834 թ. Շվեդիան որոշում է հայտարարել իր մշտական չեզոքության մասին: Անդամակցում է ԵՄ-ին 1995 թվականից (տե՛ս **Моджорян Л.** Политика подлинного нейтралитета – важный фактор борьбы народов за мир и независимость, М., 1956, с. 11-12): Իռլանդիայում 1937 թ. ընդունված Սահմանադրությամբ վերջ է տրվում Մեծ Բրիտանիայի դոմինիոնի կարգավիճակին: Երկրի գլխավոր օրենքի 28-րդ հոդվածում ամրագրվում է, որ «պատերազմ չպետք է հայտարարվի, և պետությունը չպետք է մասնակցի որևէ պատերազմի առանց Ներկայացուցիչների պալատի համաձայնության»: Կառավարության հայտարարություններում երկրի չեզոք քաղաքական կուրսը սահմանվում է «ռազմական չեզոքություն» արտահայտությամբ՝ նկատի ունենալով վերջինիս չմասնակցելը ռազմական խմբավորումներին, այդ թվում՝ ՆԱՏՕ-ին: ԵՄ-ի անդամ է 1973 թվականից (տե՛ս **Кружков В.** Нейтралитет в Европейском политическом поле (Международная жизнь, 2000, N 6, с. 63)):

Ֆինլանդիայի չեզոքությունը ճանաչվում է 1948 թ.՝ «Ֆինլանդիայի ու Խորհրդային Միության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագրով: Նման պայմանագիր ստորագրելու նախաձեռնությամբ հանդես էր եկել խորհրդային կառավարությունը՝ «հաշվի առնելով Ֆինլանդիայի պատրաստակամությունը՝ հեռու մնալ մեծ տերությունների միջև շահերի հակամարտություններից և պատրաստակամություն հայտնելով համագործակցել՝ ի շահ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման»: Երկիրը ԵՄ-ի անդամ է դարձել 1995 թվականից (տե՛ս **Дипломатический словарь, под ред. А. Громыко, т. 3, М., 1986, с. 321**):

1955 թ. մայիսի 15-ին Վիեննայում ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի արտաքին գործերի նախարարները ստորագրում են «Անկախ և ժողովրդավարական Ավստրիայի վերականգնման մասին պետական պայմանագիրը»: Երկրի տարածքից զավթիչ ուժերի դուրսբերման հաջորդ օրը՝ 1955 թ. հոկտեմբերի 26-ին, ավստրիական խորհրդարանն ընդունում է դաշնային սահմանադրական օրենք չեզոքության վերաբերյալ: Օրենքի առաջին հոդվածում ասվում էր. «Սեփական արտաքին անկախության ամրապնդման և սեփական տարածքի անձեռնմխելիության ապահովման նպատակով Ավստրիան հոժարակամ հայտարարում է իր մշտական չեզոքության մասին: Ավստրիան այն կպահպանի և կպաշտպանի իր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով: Այս նպատակների իրագործումն ապահովելու համար Ավստրիան ապագայում երբեք չի մտնի ռազմական որևէ միության մեջ և թույլ չի տա սեփական տարածքում օտար պետությունների ռազմական հենակետերի ստեղծում»: 1995 թ. երկիրը ԵՄ-ի անդամ դարձավ (տե՛ս **Кружков В.** Как Австрия стала нейтральной (Международная жизнь, 2008, N 8, с. 161-175): 1980 թ. Մալթան օրենք է ընդունում իր մշտական չեզոքության մասին, իսկ 1983 թ. համաձայնագիր է կնքում Իտալիայի հետ,

Ինչպես նշում է լիտվացի քաղաքագետ Ա. Մոլիսը, «Ֆինլանդիայի, Շվեդիայի, Ավստրիայի, Իռլանդիայի համար «սառը պատերազմի» տարիներին չեզոքությունը նշանակում էր անկախ արտաքին և անվտանգության քաղաքականություն: Անկախությունը, վստահելի ազգային պաշտպանությունը և անգամ որոշակի ինքնամեկուսացումն այն հիմնական առանձնահատկություններն էին, որոնք չեզոք երկրներին տարբերում էին արևմտյան այլ երկրներից: Երբ մեծ հարևանները պայքարում էին բուֆերային երկրներում ազդեցություն տարածելու համար, չեզոք երկրները փորձում էին նվազագույնի հասցնել իրենց արտաքին և անվտանգության քաղաքականությանը սպառնացող վտանգները և պաշտպանել իրենց տարածքներն ու քաղաքական անկախությունը: Սակայն սպառնալիքների բնույթը փոխվեց և ինքնիշխանության գաղափարները սկսեցին փոքր պետություններին ստիպել համագործակցության նոր ճանապարհներ որոնել և վերանայել իրենց չեզոքության դոկտրինները»⁵:

Եթե ԵՄ-ն մինչև 1990-ական թթ. վերջը պահպանում էր իր՝ բացառապես «քաղաքացիական» կառույց լինելու առաքելությունը, ապա հաշվի առնելով միջազգային հանրության առջև ծառացած նոր խնդիրները՝ XXI դ. սկզբից սկսեց մտածել իր ռազմական կարողություններն ամրապնդելու մասին: Այս առիթով հետաքրքիր միտք է արտահայտում Ժամանակակից բրիտանացի քաղաքագետ Թ. Սալմոնը. «Միգուցե Եվրոպան (նկատի ունի Եվրոպական Միությունը - Ա. Մ.) ձգտում է ներկայանալ բացառապես որպես քաղաքացիական ուժ, սակայն ռազմական ուժ լինելու ցայտունությունը դրանից չի նվազել»⁶:

Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ) և մասնավորապես Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԵԱՊՔ) շրջանակներում կառույցի հիմնական խնդիրն է քաղաքացիական և ռազմական ճգնաժամերի կառավարման առաքելությունների կազմակերպումը: Այդ իսկ պատճառով այսօր բուռն քննարկումների առարկա է դարձել այն հարցը, թե արդյո՞ք ԵԱՊՔ-ին լիարժեք մասնակցությունը համատեղելի է չեզոք անդամ-երկրների կարգավիճակի հետ: Հարկ է նշել, որ ԵՄ-ի անդամ չեզոք երկրներից և ոչ մեկը պաշտոնապես չի հայտարարել իր կարգավիճակի վերացման մասին, սակայն, որպեսզի «չեզոքություն» հասկացությունը ամբողջովին չսահմանափակի տարբեր հարցերի շուրջ մանրերելու հնարավորությունը, այս երկրների կառավարությունները կարծես միաձայն որոշեցին հասկացությանը տալ միայն ռազմական դաշինքներին չմիանալու պարտավորության իմաստը՝ չեզոք (neutral) երկրի փոխարեն իրենց անվանելով «չմիավորված» (non-aligned): Այս

որը երաշխավորում էր կղզու այս կարգավիճակը: ԵՄ-ի անդամ է դարձել 2004 թվականին (տե՛ս Woodliffe J. The Peacetime Use of Foreign Military Installations under Modern International Law, Boston, 1992, p. 99-100):

⁵ Molis A. The Role and Interests of Small States in Developing European Security and Defence Policy (Baltic Security & Defence Review, vol. 8, 2006, p. 91).

⁶ Salmon T. The European Security and Defence Policy: Built on Rocks or Sand? (European Foreign Affairs Review N 10, Kluwer Law International, 2005, p. 362).

առիթով ֆինն մասնագետ Թ. Վաահտորանտան նշում է. «բուն չեզոքության շրջանակներն այնպես են նեղացել, որ այն նշանակում է զուտ ռազմական դաշինքներին չմիանալու քաղաքականություն»⁷:

Եվ այսպես, 1992 թ. կնքված Մասստրիխտի պայմանագրով դրվում է ԵՄ-ի Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հիմքը, որի հեռահար նպատակ էր դառնալու համալսարանական պաշտպանական համակարգի ստեղծումը: ԵՄ-ի «ռազմականացման» վերաբերյալ նորվեգացի մասնագետ Պ. Ռիեկերը նշում է. «Մի քանի տասնամյակներ շարունակ նշանակալի ուշադրություն է դարձվել ԵՄ-ում հանգավորության և ահաբեկչության նվազեցմանն ուղղված քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու վրա: Սկզբում այս սպառնալիքը ընկալվում էր զուտ որպես ներքին խնդիր, ուստի ԵՄ-ի քաղաքականությունը կենտրոնանում էր անվտանգության վրա ԵՄ-ի տարածքի ներսում՝ ուժեղացնելով համագործակցությունն արդարադատության և ներքին գործերի ոլորտում: Վերջերս ներքին և արտաքին անվտանգության սահմանազատումը դարձավ պակաս հստակ, ուստի հիմա ընդհանուր պայմանավորվածություն կա ԵՄ-ի շրջանակում, որ ներքին և արտաքին գործիքների համակցություն է հարկավոր այսօրվա անվտանգության մարտահրավերներին դիմագրավելու համար: Այս ամենը ցույց է տալիս, որ ԵՄ-ն անվտանգության վերաբերյալ սկսել է որդեգրել մի քաղաքական մոտեցում, որը դուրս է գալիս ԸԱԱԲ-ի շրջանակից (որը սկզբնական շրջանում ենթադրում էր միասնական արտաքին քաղաքականության մշակում և չէր անցնում քաղաքացիական հարցերով համագործակցության սահմանը - Ա. Մ.)»⁸:

1999 թ. ապրիլի 23-24-ը տեղի ունեցած ՆԱՏՕ-ի՝ վաշինգտոնյան հորեյանական գագաթնաժողովի որոշումներում հավանություն էր տրվում «ինքնուրույն գործողություններ իրականացնելու հնարավորություն ունենալու ԵՄ-ի պատրաստակամությանը, ինչը ենթադրում էր որոշումների ընդունում և ռազմական գործողությունների հաստատում այն ժամանակ, երբ Դաշինքը (ՆԱՏՕ-ն - Ա. Մ.), որպես այդպիսին, գործունեություն չի ծավալում»⁹: Այսպես, ԸԱԱԲ-ի շրջանակում ձևավորվում է ԵԱԴԲ-ն՝ «որպես միջանկյալ քայլ ընդհանուր պաշտպանության քաղաքականության նպատակի ուղղությամբ»¹⁰:

Բնական է, որ Միության անդամ «չեզոք» պետությունները պետք է արձագանքեին նման փոփոխություններին, և սրա առաջին ազդակն այն եղավ, որ

⁷ Vaahutoranta T. *Obsolete Neutrality, Challenges to Neutral & Non-Aligned Countries in Europe and Beyond*, Geneva, 2005, p. 23.

⁸ Rieker P. *Europeanization of National Security Identity: the EU and the Changing Security Identities of the Nordic States*, Contemporary Security Studies, N. Y., 2006, p. 4.

⁹ Европейское право. Право Европейского союза и правовое обеспечение защиты прав человека, под ред. Л. Энтина, М., 2007, с. 442.

¹⁰ Եվրոպական միություն՝ համապարփակ նկարագիր: Ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, Ե., 2006, էջ 53:

Մասստրիխտի (Եվրոպական միության մասին) պայմանագրի կնքման ժամանակ Բոլանդիայի կառավարությունը հանդես եկավ մի առաջարկությամբ, որն ստացավ «իռլանդական դրույթ» անվանումը: Պայմանագրի հոդված J.4-ի 4-րդ կետում նշվում էր, որ «Միության քաղաքականությունը չպետք է վնաս հասցնի որոշ անդամ-պետությունների (նկատի է առնվում հենց չեզոք պետությունները - Ա. Մ.) անվտանգության և պաշտպանության քաղաքականության առանձնահատուկ բնույթին»¹¹: Սակայն ժամանակակից միջազգային իրավունքի մասնագետ Վ. Համմերի կարծիքով, այս դրույթը որևէ էական ազդեցություն չունի, և «կասկած չի մնում, որ չեզոք և չմիավորված անդամ-երկրները փոխադարձ (ռազմական) օգնություն ցուցաբերելու պարտավորության տակ են զինված հարձակման դեպքում»¹², ինչը բացահայտորեն հակասում է չեզոքության իրավունքին:

Մասնագետի կարծիքը պարունակում է ճշմարտության հատիկ, քանզի ԵՄ-ի անդամ դառնալուն պես Ավստրիան, որի չեզոքությունը մյուս բոլոր պետություններից «ամենաիրավականը» կարելի է համարել, չնայած «իռլանդական դրույթին»՝ նոր հոդված (23 f) ներառեց Դաշնային սահմանադրության մեջ, որը սահմանափակում էր 1955 թ. ընդունված Չեզոքության ակտը, որ երկիրը հնարավորություն ունենա ԸԱԱԲ-ի շրջանակում մասնակցել երրորդ պետությունների հանդեպ կիրառվող տնտեսական սանկցիաներին: Ամերիկացի քաղաքագետ Ք. Անկենմանի կարծիքով, «հոդվածն ընդունվեց, որպեսզի ԵՄ-ի պայմանագրի օրենքները համապատասխանեցվեն Ավստրիայի սեփական սահմանադրական օրենքներին»¹³: Պարզ է, որ նման համապատասխանեցումը կարելի է որակել որպես շեղում չեզոքության դիրքերից. այս քայլն արդեն այն իրողության ազդակն էր, որ Ավստրիան այլևս չէր ցանկանում դուրս մնալ համաեվրոպական ռազմական համագործակցությունից և պատրաստ էր ավելի ակտիվ գործել Միության շրջանակում:

ԸԱԱԲ-ի հետագա զարգացումն իր արտահայտությունը գտավ 1997 թ. ստորագրված՝ Ամստերդամի պայմանագրով սահմանվող, այսպես կոչված՝ «Պետերսբերգյան առաջադրանքներում», որտեղ դրույթներ էին ներառված մարդասիրական և փրկարարական գործունեության, խաղաղապահ առաքելությունների, ճգնաժամերի կառավարման համար տրամադրվող մարտական ուժերի (ներառյալ խաղաղարար գործունեությունը) մասին¹⁴:

Պայմանագրի ստորագրումից հետո երևաց, մի կողմից, Շվեդիայի և Ֆինլանդիայի, մյուս կողմից, Ավստրիայի և Բոլանդիայի մոտեցումների

¹¹ *St. u* Text of the Treaty on the European Union, <http://www.eurotreaties.com/maastrichttext.html>, p. 9.

¹² **Hummer W.** The New EU – A “Military Pact”? Solidarity-Neutrality-Irish Clause, in **Hauser G., Kernic F.** (eds), *European Security in Transition*, Aldershot, 2006, p. 67.

¹³ **Ankenman K. S.** Austrian Neutrality: Setting the Agenda (Wismar Discussion Papers, N 13/2006, p. 61).

¹⁴ Մանրամասն տե՛ս **Pagani F.** A New Gear in the CFSP Machinery: Integration of the Petersberg Tasks in the Treaty on European Union (*European Journal of International Law*, 1998, N 9, p. 737-749).

տարբերությունը տվյալ հարցի վերաբերյալ: Ինչպես ավստրիական և իռլանդական կառավարությունները, այնպես էլ շվեդական ու ֆիննական իշխանությունները դեմ էին, որ ՀԱԱԲ-ն զարգանա չեզոքության քաղաքականությանը հակադիր ուղղությամբ: Սակայն բանակցությունների սկզբնական շրջանում Ֆինլանդիան և Շվեդիան բավական ակտիվություն ցուցաբերեցին և առաջարկեցին, որ Պետերսբերգյան առաջադրանքները ներառվեն ԵՄ-ի մասին պայմանագրում¹⁵: Այս քայլով նրանք հնարավորություն էին ստանալու լիարժեք մասնակցել հավաքական անվտանգության վերաբերյալ կայացվող բոլոր որոշումների ընդունմանը: «Մինչդեռ երկու երկրներում էլ սա ընդունվեց որպես հաջողված քաղաքական գործողություն, - նշում է Պ. Ռիեկերը, - այն փաստը, որ Պետերսբերգի սահմանումը ներառում է առաջադրանքներ, որոնք կարող են հեռու գնալ ավանդական խաղաղապահ գործունեությունից՝ հաշվի առնելով ռազմական ուժի օգտագործումը, արդեն իսկ երկու երկրների անվտանգության ինքնության կարևոր փոփոխություն է նշանակում»¹⁶:

Իռլանդիայի համար Պետերսբերգյան առաջադրանքները ընդհանուր առմամբ նույնպես ընդունելի էին, սակայն երկիրը դեմ ար-տահայտվեց դրանց շրջանակներում մարտական առաքելություններին մասնակցությանը: Իսկ Ավստրիան, ընդհակառակը, ավելի հակամետ էր նման զարգացումների նկատմամբ¹⁷: Վերջինս ևս մեկ սահմանադրական փոփոխություն կատարեց, որպեսզի հնարավորություն ստանա լիարժեք մասնակցելու առաջադրանքներին, ինչը հիմնականում կատարվում էր «միասնություն Եվրոպայում, չեզոքություն Եվրոպայից դուրս» կարգախոսի համապատասխան:

1998 թ. Կոսովոյի ճգնաժամի խորացման ժամանակ կրկին նշմարվեց չեզոք երկրների նահանջը իրենց ավանդական քաղաքականությունից: 1999 թ. մարտին ՆԱՏՕ-ն որոշում է կայացնում Կոսովոյում օդուժ օգտագործել՝ չնայած այն հանգամանքին, որ ՄԱԿ-ը դաշնակցային ուժերին ռազմական գործողությունների համար մանդատ չէր հատկացրել: Սակայն ԵՄ-ի ճնշումների հետևանքով չեզոք անդամ-պետություններին այլ բան չէր մնում, քան միասնական դիրքորոշմամբ հանդես գալը, ուստի վերջիններիս կառավարությունները հավանություն են տալիս ներխուժմանը՝ միևնույն ժամանակ մերժելով դաշնակցային ուժերին որևէ օգնություն ցուցաբերելը¹⁸:

Հարկ է նշել, որ Արևմուտքում ցայսօր տարածված է այն կարծիքը, որ Կոսովոյում ժողովրդի դրությունը ծայրահեղ բարդ էր, հետևաբար, ռազմական ներխուժումը

¹⁵ Vaahutoranta T., Forsberg T. Post-neutral or pre-allied?: Finnish and Swedish policies on the EU and NATO as security organizations, UPI Working Papers N 29, 2000, p. 14).

¹⁶ Rieker P. The Nordic countries and EU security policy: convergent or divergent agendas? in The Nordic Countries and the European Security and Defence Policy, A.J. K. Bailes, G. Herolf, B. Sundelius (eds), Oxford, 2006, p. 307.

¹⁷ Eliassen K. A. Foreign and Security Policy in the European Union, Trow Bridge, 1998, p. 63.

¹⁸ Croci O., Verdun A. The Transatlantic Divide: Foreign and Security Policies in the Atlantic Alliance from Kosovo to Iraq. Europe in Change, Manchester, 2006, p. 181.

պետք է համարել լեգիտիմ¹⁹: Սակայն սա որևէ կերպ չի արդարացնում չեզոք պետությունների վարքագիծը, քանզի, մեր կարծիքով, որևէ կողմին անգամ գաղափարապես հարելն արդեն նահանջ է «չեզոքության» գաղափարից:

ԵԱՊԲ-ի հետագա զարգացմանը մասնակցություն ցուցաբերեցին նաև չեզոք երկրները, սակայն նրանց մոտեցումների մեջ կրկին էական տարբերություններ նկատվեցին: Եթե 1999 թ. դեկտեմբերին Հելսինկիում կայացած գագաթնաժողովին, որով նախատեսվում էր Պետերբուրգյան առաջադրանքները կյանքի կոչելու համար Եվրոպական արագ արձագանքման ուժեր ստեղծել, և Շվեդիայի ու Ֆինլանդիայի կառավարությունները որևէ խնդիր չառաջացրին, ապա իռլանդական կառավարությունը, չնայած հատկացրած գործերին, նշեց, որ նրանք գործի կանցնեն միայն, այսպես կոչված, «եռակի փականի» (triple lock) համակարգի համաձայն, այսինքն՝ ցանկացած ռազմական գործողության համար նախ ՄԱԿ-ի մանդատն էր պահանջվում, որն այնուհետև պետք է հաստատվեր երկրի պառլամենտի կողմից և վերջում համաձայնեցվեր կառավարությունում²⁰: Բացի այդ, որոշվել էր, որ Եվրոպական արագ արձագանքման ուժերին մասնակցելու համար (ինչը նախատեսվում էր արդեն Նիցցայի պայմանագրով) երկրում հանրաքվե չէր լինելու, այնուամենայնիվ, այն անցկացվեց, որով իռլանդացիները «ոչ» ասացին պայմանագրին՝ վախենալով, որ այն «հետագայում կքայքայի իռլանդական չեզոքությունը»²¹:

Այս դեպքերից հետո իռլանդական կառավարությունը սկսեց հանրությանը համոզել, որ ռազմական չեզոքություն պահպանելու իր դիրքորոշումը չի փոփոխվելու: 2002 թ. հունիսին ԵՄ-ի մնացած անդամները համաձայնության չեկան, այսպես կոչված, Սնիլի հրոչակագրի շուրջ, որով ճանաչվում էր Իռլանդիայի իրավունքը՝ ինքնուրույն որոշելու ԵԱՊԲ-ի շրջանակում որևէ գործողության մասնակցելու հնարավորությունն ու ձևաչափը: Հռչակագրում նշվում էր, որ պայմանագիրը փոխադարձ պաշտպանության պարտավորություններ չի առաջացնում, իսկ ԵՄ-ի ձգնաժամերի լուծման կարողությունների զարգացումը չի ենթադրում Եվրոպական բանակի ստեղծում²²: Այս փոփոխություններն էին, թերևս, պատճառը, որ Նիցցայի պայմանագրի հաստատման համար անցկացված երկրորդ հանրաքվեի ընթացքում իռլանդացիների ճնշող մեծամասնությունը հավանություն տվեց փաստաթղթին:

Ինչ վերաբերում է Ավստրիային, ապա վերջինս ոչ միայն գորքեր տրամադրեց արագ արձագանքման ուժերին, այլև հեռուն գնացող փոփոխություններ կատարեց իրավական համակարգում, որոնցով առաջնություն էր տրվում ՄԱԿ-ի կանոնադրության շրջանակում երկրի պարտավորություններին՝ ի տարբերություն

¹⁹ Glennon M. J. Limits of Law, Prerogatives of Power: Interventionism after Kosovo, N. Y., 2001, p. 26.

²⁰ O'Sullivan M. J. Ireland and the Global Question, Syracuse, 2006, p. 188.

²¹ Tonra B. A Tale of Two Referenda, in The Treaty of Nice: Actor Preferences, Bargaining and Institutional Choice, of Constitutional Law Library, F. Laursen (ed), Vol. 1 2006, p. 187.

²² Boss M. Irish Neutrality: From Nationalism to Postnationalism in Redefinitions of Irish Identity: A Postnationalist Approach, I. G. Nordin, C. Z. Llana (eds) (Cultural Identity Studies, N 12, p. 17).

մշտական չեզոքության կարգավիճակից բխող պարտականությունների: Համա-միտ ենք եվրոպացի մասնագետ Գ. Հաուսերի այն կարծիքին, որ Ավստրիայի անվտանգության քաղաքականությունը «ներգրավվածության և չեզոքության միջև» է գտնվում²³:

Ընդհանրապես, 2000 թ. սկսած՝ Ավստրիայի կառավարական շրջանակներում չեզոքության քաղաքականության նկատմամբ վերաբերմունքը էական փոփոխությունների ենթարկվեց, ինչը հիմնականում բացատրվում էր նրանով, որ, երկրում գործող որոշ կուսակցությունների կարծիքով, չեզոք լինելը այլևս խոչընդոտ է եվրոպական միասնության համար և հակասում է ԵՄ-ի շրջանակում պարտավորությունների և ռիսկերի հավասար և արդարացի բաշխման գաղափարախոսությանը: Հակառակ ԵՄ-ի անդամ մյուս չեզոք պետությունների՝ Ավստրիան ժամանակ առ ժամանակ նույնիսկ կոդմ էր արտահայտվում Միության շրջանակում փոխադարձ ռազմական պաշտպանության գաղափարին, ինչը բացահայտորեն հակասում էր երկրի չեզոք կարգավիճակին: Երկրի այս քայլերը բացասաբար ընդունվեցին մյուս չեզոք երկրների կողմից, իսկ Ավստրիացիների մեծ մասն էլ ցայժմ դեմ է արտահայտվում նման առաջարկներին: Ուստի, Ավստրիական կառավարությանն այլ բան չի մնում, բացի նման քաղաքական կուրսից ժամանակավորապես հրաժարվելուց:

2003 թվականից ԵՄ-ն սկսում է եռանդուն գործունեություն ծավալել ռազմական և քաղաքացիական ճգնաժամերի կարգավորման ուղղությամբ: «Եռակի փականի» պատճառով Իռլանդիան չի մասնակցում ԵԱՊԲ-ի շրջանակում իրականացվող առաջին ռազմական գործողությանը Մակեդոնիայում (Concordia), քանզի այն չէր արժանացել ՄԱԿ-ի պաշտոնական հավանությանը: Ի տարբերություն Շվեդիայի և Ավստրիայի՝ Ֆինլանդիան նույնպես չմասնակցեց այս առաքելությանը: Սակայն նույն թվականին Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում իրականացված ԵՄ-ի առաքելությանը (Artemis) Իռլանդիան մասնակցություն ունեցավ, քանզի այս գործողությունը կոչված էր օժանդակելու ՄԱԿ-ին երկրում ճգնաժամը հաղթահարելու գործում²⁴:

Իսկ երբ առաջ քաշվեց ԵՄ-ի մարտական խմբերին մասնակցության հարցը, որի սկիզբը դրվել էր 2004 թ.՝ նպատակ ունենալով ամրապնդել ԵՄ-ի կարողությունները ճգնաժամերին արագ արձագանքելու նպատակով, չեզոք երկրներից հատկապես Ավստրիայում և Իռլանդիայում կրկին լսելի են դառնում չեզոքության պահպանման շուրջ խոսակցությունները: Չնայած սկզբում Իռլանդիայի մասնակցությունը բացառվեց, սակայն ի վերջո երկրի

²³ Hauser G. ESDP and Austria: Security Policy Between Engagement and Neutrality, in Austrian Foreign Policy in Historical Context, Vol. 14 of Contemporary Austrian Studies, Bischof G., Pelinka A., Gehler M. (eds), New Jersey, 2006, p. 207.

²⁴ ԵԱՊԲ-ի շրջանակում իրականացված խաղաղապահ գործողությունների մասին մանրամասն տե՛ս Europe in the world: Working for Peace Security and Stability, Office for Official Publications of the European Communities, Luxembourg, 2007, p. 58-59.

կառավարությունը որոշեց համալրել, այսպես կոչված, Սկանդինավյան խումբը, որի հետևանքով որոշակի փոփոխություններ կատարվեցին երկրի իրավա-կան համակարգում, ինչը թուլացրեց չեզոքության կարգավիճակի հիմքերը: Սակայն Բոլանդիան վերահաստատեց, որ տրամադրված գործերի ծառայությունը հնարավոր կլինի միայն «եռակի փականի» մեխանիզմի գործադրմամբ²⁵:

Բոլանդիայի պաշտպանական օրենսդրության փոփոխությունները տեղի ունեցան 2006 թ., որոնց շնորհիվ որոշվեց թե ՄԱԿ-ի ինչպիսի լիազորություն է հարկավոր, որպեսզի երկիրը կարողանա մասնակցել ԵՄ-ի կողմից կազմակերպվող ռազմական գործողություններին: Մասնակցությունը իրավաչափ կհամարվի, եթե այն հաստատի կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, կամ Գլխավոր ասամբլեան²⁶:

ՄԱԿ-ի լիազորության անհրաժեշտության մասին խոսվեց նաև Ավստրիայում, քանզի ավստրիական կառավարությունը պատրաստ չէր մասնակցություն ցուցաբերել ԵՄ-ի մարտական խմբերին, և չգտավ հարմար գործընկերներ մարտական խումբ ձևավորելու համար: Սակայն 2012 թ. երկիրը պատրաստվում է Գերմանիայի և Չեխիայի հետ միասին մարտական խումբ ձևավորել²⁷:

2007 թ. դեկտեմբերին ԵՄ-ի անդամների ստորագրած Լիսաբոնի պայմանագրում (ուժի մեջ է 2009 թ. դեկտեմբերի 1-ից) ևս պահպանվեց ԵՄ-ի մասին պայմանագրով նախատեսված չեզոք պետությունների կարգավիճակի անձեռնմխելիությունը:

Ինչպես տեսնում ենք, ԵՄ-ի անդամ չեզոք պետությունները հանուն համաեվրոպական ռազմական միասնության ստիպված են որոշակի փոփոխություններ կատարել իրենց չեզոք կարգավիճակի ավանդական մեկնաբանության հարցում՝ տարածաշրջանի՝ ինտեգրման գործընթացներից դուրս չմնալու նպատակով: Սակայն պետք է նշել, որ դեռևս վաղ է խոսել այս երկրներում չեզոք կարգավիճակից լիարժեք հրաժարվելու մասին, քանզի ժամանակի ընթացքում այն դարձել է ազգային ինքնության կարևոր բաղադրատարրերից մեկը և բարձր է գնահատվում հասարակության կողմից: Այդ է թերևս պատճառը, որ գործուն մասնակցություն ունենալով ԵԱՊԶ-ի շրջանակում իրականացվող ճգնաժամերի կառավարման շուրջ համագործակցությանը՝ չեզոք, պետություններն, այնուամենայնիվ, դեռևս համաձայն չեն դառնալ փոխադարձ պաշտպանություն ենթադրող պարտավորություններ կրողը:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի անդամ չեզոք պետությունների մասնակցությանը ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության (ԳՀԽ) ծրագրին, ապա պետք է

²⁵ Laffan B., Tonra B. Ireland in a Wider World: Europe and International Dimension, in Coakley J., Politics in the Republic of Ireland, 5th ed., N. Y., 2009, p. 429.

²⁶ Ireland and the EU Battlegroups, <http://www.forumoneurope.ie/index2c83.html?locID=366&docID=987>

²⁷ Sĕ ū <http://www.bmeia.gv.at/en/foreign-ministry/foreign-policy/europe/european-union/common-foreign-and-security-policy-cfsp/esdp.html>

նշել, որ Ավստրիայի, Ֆինլանդիայի, Բուլանդիայի, Մալթայի և Շվեդիայի կողմից սա ավելի շատ ընկալվում է ոչ թե որպես ճանապարհ դեպի հետագա անդամակցություն կառույցին, այլ՝ որպես յուրատեսակ լրացում ԵՄ-ին անդամակցությանը:

Ըստ շվեդ քաղաքագետ Մ. Պետերսոնի՝ «չեզոքներին», ծրագրի գործընկեր այլ երկրների հետ համեմատած, ՆԱՏՕ-ն առանցքային հարցերում դիտարկում է որպես միատարր խումբ, որոնց հետ հարաբերությունները կարելի է կազմակերպել միևնույն ձևաչափով: Նրանք ԳՀԽ ծրագրի, այսպես կոչված, «փափուկ» նպատակների օրինակելի իրականացնողներից են, քանզի այս բոլոր երկրներում պաշտպանական պլանավորման և բյուջետավորման գործընթացն արդեն վաղուց կանոնակարգված ու թափանցիկ է, և նրանցից ոչ մեկը չունի զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության պակաս: Սակայն, երբ խոսքը ծրագրի «կոշտ» նպատակների մասին է, ապա այստեղ կարելի է որոշակի տարբերություններ տեսնել չեզոք պետությունների դիրքորոշումների միջև²⁸:

Ուսումնասիրելով ՆԱՏՕ-ի հետ չեզոք երկրների համագործակցության փորձը՝ կարելի է նկատել, որ նրանցից ամենապատրաստակամը Ֆինլանդիան և Շվեդիան էին, որոնց հաջորդում են Ավստրիան և Բուլանդիան, ապա՝ Մալթան: Երբ 1994 թ. մեկնարկեց ՆԱՏՕ-ի ԳՀԽ ծրագիրը, Ֆինլանդիան և Շվեդիան անմիջապես միացան դրան՝ նույն թվականի դեկտեմբերին կնքելով իրենց առաջին Անհատական գործընկերության ծրագրերը, մինչդեռ Ավստրիան և Մալթան ծրագրին միացան 1995 թ., իսկ Բուլանդիան՝ 1999 թ.²⁹:

Նույն պատկերն ենք տեսնում նաև ԳՀԽ ծրագրի շրջանակում Պլանավորման և վերանայման գործընթացին (ՊՎԳ) չեզոք երկրների մասնակցության հարցում: ՊՎԳ-ի իրականացումն սկսվել էր 1994 թ., որի նպատակն էր գործընկեր երկրների հետ «ինտեգրման, փոխգործակցության զարգացման և չափանիշների մերձեցման մի յուրօրինակ մեխանիզմ ստեղծել: Ֆինլանդիան և Շվեդիան միացան գործընթացին 1995 թ., Ավստրիան՝ 1996 թ., Բուլանդիան 2001 թ., իսկ Մալթան դեռևս քննարկում է ապագա մասնակցությունը ԳՀԽ-ի հետ համագործակցությունը 2008 թ. վերսկսելուց հետո:

ՆԱՏՕ-ի հետ չեզոք երկրների համագործակցության մակարդակի երրորդ ցուցանիշը կարելի է համարել այս երկրների մասնակցությունը ՆԱՏՕ-ի խաղաղապահության և ճգնաժամերի կառավարման գործողություններին: Ընդհանուր առմամբ, Շվեդիան ամենամեծ ավանդն ունի այս գործում, որին հաջորդում են Ֆինլանդիան, Ավստրիան, ապա Բուլանդիան: Իսկ Մալթան, որի բնակչու- թյունը մոտավորապես 400.000 է, և որը երկար ժամանակ ԳՀԽ ծրագրին չի մասնակցել, ներկայումս հավակնություններ ունի զարգացնելու և

²⁸ Petersson M. NATO and the EU “Neutrals”- Instrumental or Value Oriented Utility in NATO: The Power of Partnerships, Edstrom H., Matlary J. H., Petersson M. (eds), Basingstoke, 2011, p. 112-130.

²⁹ Տե՛ս <http://www.nato.int/pfp/sig-cntr.htm>

կատարելագործելու խաղաղարար գործողություններին օժանդակելու իր կարողությունները:

1996 թ. Ալբանիան, Ֆինլանդիան և Շվեդիան օժանդակեցին ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերին Բոսնիայում և Հերցեգովինայում իրականացվող գործողության ընթացքում (IFOR/SFOR), որոնց 1997 թ. միացավ նաև Բուլղարիան, որն, ի դեպ, այդ ժամանակ դեռևս ԳՀԽ-ի մասնակից չէր: Սկսած 1999 թ.՝ այս չորս երկրները համալրեցին ՆԱՏՕ-ի կոսովյան ուժերը (KFOR): Չեզոք պետությունները մասնակցություն ցուցաբերեցին նաև այն ժամանակ, երբ 2003 թ. ՆԱՏՕ-ն Աֆղանստանում ստանձնեց չորրորդ՝ Միջազգային անվտանգության օգնության ուժերի (ISAF) կառավարման պատասխանատվությունը³⁰:

Փաստորեն, գաղափարախոսական առումով չեզոք պետությունները հարում են ՆԱՏՕ-ի քաղաքական նկրտումներին՝ գործունե մասնակցություն ունենալով աշխարհի տարբեր մասերում նրա ղեկավարած խաղաղապահ գործողություններին: Բացի այդ, չեզոք երկրները պատրաստակամ են իրենց ռազմական ուժերը համապատասխանեցնելու նատօական չափանիշներին, ինչը միայն դրական կարող է ազդել Եվրոպայում միասնական «անվտանգության համակարգի» ստեղծմանը: Սակայն, ինչպես վերը նշվեց, ՆԱՏՕ-ի հետ զուտ ռազմական բնույթի համագործակցության դեպքում, ինչպիսին, օրինակ, զորքերի տրամադրումն է, չեզոք պետությունների դիրքորոշումների միջև, այնուամենայնիվ, նկատելի են քանակական և որակական տարբերություններ:

Մեր կարծիքով, սա ոչ միայն «չեզոքություն-եվրոպական միասնություն» պայքարի, այլև ռազմական ռեսուրսները հնարավորինս արդյունավետ օգտագործելու մտածված ներքին քաղաքականության արդյունք է: Ռեսուրսների տնտեսմամբ կարելի է, թերևս, բա-ցատրել նաև այն հանգամանքը, որ տվյալ պետությունները տարբեր մասնակցություն են ունենում աշխարհում տեղի ունեցող խաղաղապահ գործողություններին ընդհանրապես, ոչ միայն ՆԱՏՕ-ի, այլև, օրինակ, հենց ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացվող առաքելություններին:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ միջազգային հարաբերություններում առկա ժամանակակից խնդիրները և մարտահրավերներն էականորեն փոխել են չեզոքության քաղաքականության ավանդական դիմագիծը: Այսօր ԵՄ-ի անդամ չեզոք երկրները ստիպված են մասնակցություն ունենալ համաեվրոպական անվտանգությանն ուղղված միջոցառումներին: Սրա մասին է վկայում վերջիններիս մասնակցությունը ճգնաժամերի լուծմանն ուղղված ջանքերին և ինչպես ԵՄ-ի, այնպես էլ ՆԱՏՕ-ի հետ գործընկերության շրջանակներում իրականացվող խաղաղապահ գործողություններին: Սակայն չեզոքությունից ամբողջական հրաժարում դեռևս չի արձանագրվել, քանզի այն մեծ աջակցություն է վայելում

³⁰ Croci O., Verdun A. The Transatlantic Divide: Foreign and Security Policies in the Atlantic Alliance from Kosovo to Iraq. Europe in Change, Manchester, 2006, p. 179.

չեզոք երկրների հասարակություններում և ազգային ինքնության անքակտելի տարրերից է: Բացի այդ, չեզոքության և ներգրավվածության միջև գտնվելը կարելի է ձեռնտու համարել, քանզի դրանով քաղաքական դաշտում մանևրելու առավել մեծ հնարավորություն է ընձեռնվում:

**ПОЛИТИКА НЕЙТРАЛИТЕТА В КОНТЕКСТЕ
ВОЕННЫХ ИНТЕГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ В ЕВРОПЕ**

АВЕТИСЯН М. С.

Резюме

Проблемы и задачи современных международных отношений существенно сказались на особенностях политики нейтралитета. На сегодняшний день нейтральные страны-члены ЕС вынуждены принимать участие в действиях, направленных на обеспечение общеевропейской безопасности, в частности, в урегулировании кризисов как в рамках ЕС, так и в рамках партнерства с НАТО в разных миротворческих операциях. Однако они не могут полностью отказаться от политики нейтралитета, так как этот статус пользуется большой поддержкой со стороны общества в нейтральных странах, став неотъемлемым элементом национальной идентичности. Более того, позиция между “нейтралитетом и обязательствами” считается выгодной для нейтральных стран, поскольку они обладают большими возможностями маневрирования на политическом поле.